ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«28» օգոստոսի 2017 թ. թիվ 439-Ա

ՀՐԱՄԱՆ

«ՖՈՐ ԷՅ ՔՆՍԱԼԹԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՆԱԽԱՁԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՖՈՐ ԷՅ ՔՆՍԱԼԹԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 22.06.2017 թվականի թիվ 23-07/001386-17 գրության հիման վրա 26.07.2017 թվականի թիվ 03/24-2/13723-17 գրությամբ հարուցված վարչական վարույթի ընթացքում պարզվել է, որ «ՖՈՐ ԷՅ ՔՆՍԱԼԹԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը լիցենզավորմանը (նշանակմանը, որակավորմանը կամ այլ կերպ գործունեության թույլտվություն տրամադրելուն) հաջորդող 1-ամսյա ժամկետում չի հաշվառվել լիազոր մարմնում՝ լիազոր մարմնի սահմանած կարգով, ինչը հանդիսանում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի խախտում:

Ղեկավարվելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետով, նույն հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2008

թվականի մայիսի 18-ի թիվ 503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը խախտելու համար «ՖՈՐ ԷՅ ՔՆՍԱԼԹԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ, որպես պատասխանատվության միջոց կիրառել նախազգուշացում:
2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ